

ԱՆԵՆՈՒՆՁ ՊՈՂՈՍՅԱՆ

պատրաստական գիտ. թեկնածու,
ՀՀ մշակույթի նախարարություն

«ԵՌԱՆՈՐԱՆ» ԳՈՐԳԻ ՍԱԳՈՒՄՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՅԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հայկական լեռնաշխարհում գորգագործական մշակույթի ակունքները մասին որոշակի պատկերացումներ առաջին հերթին տալիս են հնագիտական պեղումներից հայտնաբերված նյութերը, որոնք, չնայած մեծ մասամբ ոստայնանկության հետ առնչվող գործիքներ ու հարմարանքներ են, հումքի մնացուկներ, որոշ դեպքերում էլ՝ գորգի կամ կարպետի ածխացած պատառիկներ, այնուամենայնիվ, հենց դրանք էլ մատնանշում են տարածաշրջանում գորգագործական մշակույթի վաղագույն ակունքները: Ժամանակագրական առումով առավել վաղ գտածոները առայժմ վերաբերում են Ք. ա. Ե.-Դ. հազարամյակներին¹: Հայկական լեռնաշխարհի բնիկ ցեղերի, այդ թվում՝ վաղ հայկական ցեղերի միջավայրում արմատացած ոստայնանկության ավանդույթներն իրենց հետագա զարգացումն ապրեցին Բ.-Ա. հազարամյակներում՝ վաղ հայկական պետական միավորումների ժամանակաշրջանում: Հենց այդ դարաշրջանին են վերաբերում Արթիկի դամբարանադաշտից ու Կարմիր Բլրի պեղումներից հայտնաբերված կարպետի եւ գորգի մնացուկները²: Սակայն հայոց գորգագործական մշակույթի վաղ շրջանի մասին առավել որոշակի պատկերացում ստանալու համար, անշուշտ, բացառիկ կարեւորություն է ներկայացնում «Պագիրիկ» գորգը, որը հայտնաբերվել է 1948-1949 թթ. սառած դամբարանում եւ, ըստ էության, գտնվում է գերագանց

¹ Տե՛ս **С. Есаян**, Древняя культура племен северо-восточной Армении III - I тыс. до н.э., Ереван, 1976, էջ 208 - 210:

² Տե՛ս **Т. Хачатрян**, Древняя культура Ширака, Ереван, 1975. **А. Верховская**, Текстильные изделия из раскопок Кармир-Блура, Кармир-Блур III, результаты работ 1951-1953 гг., Ереван, 1955, էջ 67: Այդ նմուշները պահվում են Հայաստանի պատմության պետական թանգարանում, Հադիճից հայտնաբերվածը՝ N. 2113/6013 եւ Կարմիր Բլրից հայտնաբերվածը՝ N. 2051/39:



Նկ. 1. Գորգ «Եռախորան», 1202 թ.:



Նկ. 2. Գորգ «Եռախորան», հիշատակարանի հատվածը:



Նկ. 3. Գորգ «Եռախորան»,
հիշատակարանի թվակիր հատվածը:



Նկ. 4. Գորգ «Եռախորան», հիշատակարանի գործվածքի
տեսակին ու պատվիրատուին վերաբերող հատվածը:



Նկ. 5. Գորգ «Եռախորան»,
վիշապապատկերների ոճավորված
դիմահայաց պատկերներ:



Նկ.6 Գորգ «Եռախորան»,
Ջրաբերդ վարդակ:

վիճակում³: Բացի հնագիտական առարկայական սկզբնաղբյուրներից՝ գոյություն ունեն գրավոր սկզբնաղբյուրներ, մասնավորապես՝ ասորական ու խեթական, Վանի թագավորության տնտեսությունը վերաբերող սեպագիր արձանագրություններ, որոնք ընդգրկում են գործվածքի տեսակներին, դրանց առեստրի կազմակերպմանն ու անհրաժեշտ հումքին վերաբերող տեղեկություններ: Ուշ շրջանի՝ անտիկ, վաղ ու զարգացած միջնադարյան հայոց գորգագործական մշակույթի մասին բավականաչափ տեղեկություններ են հաղորդում հունարեն, լատիներեն, հայերեն, հատկապես՝ արաբալեզու սկզբնաղբյուրները⁴:

Ըստ ամենայնի դրանք արժեևորելով հանդերձ՝ պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ անհամեմատ բարձր է այս կամ այն դարաշրջանին վերաբերող գորգի որոշակի որեւէ նմուշի պատմագիտական նշանակությունը, եւ հենց այս առումով էլ պետք է գնահատվի խնդրո առարկա՝ հայատառ հիշատակարանով գորգը, որը հայ ուսումնասիրողների շրջանում հայտնի է «Եռախորան» անունով. այն, մեր տիպաբանմամբ, պատկանում է գորգերի խորանավոր խմբի «Սյունազարդ» տիպին (նկ. 1): Այս տիպին պատկանող գորգերը բնորոշվում են մեկ եւ ավելի խորաններով, որոնք իրարից սահմանազատված են լինում սյուներով, սովորաբար լրացվում են բուսածաղկային տարրերով ու խորանի գազաթից կախված ջահով: Այս նկարագիրը դիտարկվում է ուշ միջնադարյան եւ դրան հաջորդած դարերին վերաբերող նմանատիպ գորգերի գեղազարդման համակարգերում: Ընդհանրապես, այս խմբին պատկանող գորգերը առնչվում են Եկեղեցու եւ կրոնական ծիսակարգի հետ ու հիմնականում գործածվել են որպես աղոթքի գորգեր: Ըստ էության, հենց դրանով է պայմանավորված այս գորգերի գեղազարդման համակարգում եկեղեցական առարկաների՝ ջահի կամ կանթեղի պատկերների, ինչպես նաեւ բուսածաղկային նախշերի ու հորինվածքների առկայությունը: «Եռախորանը» պահվում է Վիեննայի արվեստի եւ արդյունաբերության պատմության թանգարանում, առաջին անգամ հրատարակվել է 1895 թ.⁵:

³ Sfin С. Руденко, Древнейшие в мире художественные ковры и ткани мира, Москва, 1968, էջ 55:

⁴ Sfin Г. Капанцян, Хаяса-колыбель армян, Ереван, 1947, էջ 28, 30. В. Хачатрян, Восточные провинции хеттской империи, Ереван, 1971, էջ 44, 70, 75. Н. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 151-196. А. Мартиросян, Ткачи храма Эанна в Уруке нововавилонского периода, Древний Восток 5, Сборник статей АН АРМ ССР, институт востоковедения, Ереван, 1988, էջ 27-40:

⁵ Sfin А. Riegl, Ein orientalisches Teppich vom Jahre 1202 n. Chr. und die ältesten orientalischen Teppiche, Berlin 1895. նաեւ՝ Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, Երե-

Հիշատակարանն ընթեռնելի է, տառերը համաչափ են ու բավականին պարզ: Նախքան այդ թանգարանում հայտնվելը «Եռախորանը» պահվում էր Վիեննայի Մխիթարյանների թանգարանում, որտեղ եւ իր ժամանակին գորգի հիշատակարանն ընթերցել էր Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ, հայագետ Հայր Գրիգորիս Գալեմքարյանը՝ «Կրան Արկանսկի Կիրակոսի քանասերի երբ/ ու յիշարակ Հոփսիսմի Կրան/ս ՈԾԱ. թվին գաա Գ. /կաա Դ./ ործիս ա/րու/եսրա» (նկ. 2)⁶: Հիմնվելով այդ ընթերցումների արդյունքներին՝ գերմանացի արեւելագետ Ալոիզ Ռիգլը (այս գորգի առաջին հրատարակիչը) 1895 թ. այն հրատարակել է որպես 1202 թվականին գործված գորգ, ըստ այդմ՝ կարեւորել այն որպես սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող մշակութային արժեք:

Գորգի գեղազարդման համակարգի հիմքում ընկած է դաշտը կամառագարդ խորաններով զարդանախշելու սկզբունքը: Խորաններն իրարից բացազատված են սյուներով: Գորգադաշտի ազատ մնացած վերին ծայրը գեղազարդված է ոճավորված կենդանակերպ զարդանախշերով եւ բուսանախշերով: Գորգը երիզված է ծաղկաշղթայով գեղազարդված մեկ լայն եւ ակամթատերեւներով ծածկված երկու նեղ գոտիներով: Հետաքրքիր լուծում է տրված «օձագալար» ոճավորումներով ծածկված ներքին գոտու՝ եզրային կողմերին. այն շարունակվում է մինչ հիշատակարանի սկիզբն ու վերջը: Այս գոտին ամբողջացնելու համար դրա չորրորդ կողմը, որպես յուրատեսակ քիվ, շարունակված է սյուների խոյակների կենտրոնական մասերում:

«Եռախորանի» կարեւորությունն այն է, որ դրա ու ժԱ.-ԺԳ. դդ. վերաբերող գորգապատկերների եւ նույն դարաշրջանի հայ զարդարվեստի տարրերի բաղդատմամբ հնարավոր է դառնում բացահայտել ԺԹ.-Ի. դդ. համանման խորանավոր գորգերի հորինվածքների ակունքներն ու դրանց անմիջական աղբյուրները հայոց զարդարվեստի հնամենի ավանդույթներին: Այս առումով պետք է նկատի ունենալ ընդհանրապես այս խմբին պատկանող գորգերի գեղազարդման սկզբունքների առանձնահատկությունները՝ մասնավորապես խորանավոր լինելու հանգամանքը: Ըստ այդմ՝ այդպիսիք գործել են Առաջավոր Ասիայի բոլոր, այդ թվում հայոց գորգագործական կենտրոններում: Ընդգծենք, որ արաբական խալիֆաթի դարաշրջանում Հայաստանը, ըստ արաբական սկզբնաղբյուր-

ան, 1955, էջ 9:

⁶ Այս մասին տե՛ս Բ. Առաքելյան, Քաղաքները եւ արհեստները Հայաստանում XI-XIII դդ., հ. I, Երեւան, 1958, էջ 292:

ների, հայտնի էր նաեւ աղոթքի գորգերի արտադրութեամբ. դրանք մեծ պահանջարկ էին վայելում խալիֆաթի լայնածավալ շուկայում⁷: Ուստի, վաղ եւ զարգացած միջնադարյան Հայաստանի գորգագործական կենտրոններում արտադրված գորգերի թվում հատկապես մեծ թիվ էին կազմում աղոթագորգերը: Ընդ որում, դատելով սկզբնաղբյուրներում եղած տեղեկություններից՝ ենթադրում ենք, որ ժամանակի ընթացքում է հաստատվել դրանց գեղազարդման խորանավոր սկզբունքը: Համենայնդեպս, Ժ. Գ. Դ. արաբ պատմագիր ալ-Քիֆտիի գրքում տեղ գտած մի երկխոսութեան մեջ հիշատակված է Ը. Դ. վերաբերող հայկական մի աղոթագորգ (նամադ), որի գեղազարդման համակարգը ներկայացնում էր պարտեզային տեսարան՝ պատկերված էին ծաղկուն այգի եւ զբոսանքի դուրս եկած բարձրահասակ տիկնայք⁸: Այսինքն՝ իսլամի վաղ շրջանում հավատացյալները կարող էին աղոթքի ժամանակ ծնրադրել ցանկացած գորգի վրա: Պատմական Հայաստանում արտադրված աղոթագորգերը հիմնականում նախատեսված էին մահմեդականների համար եւ հայերեն ու արաբալեզու սկզբնաղբյուրներում հայտնի էին «նամադ» ու «սեջադե» անվանումներով⁹: Ըստ որոշ սկզբնաղբյուրների՝ աղոթքի գորգեր գործածվել են նաեւ հայ իրականությունում մեջ: Այս առնչությամբ, օրինակ, ուշագրավ են Զուար քահանայի՝ Երուսաղեմի հայոց պատրիարքարանի արարողակարգերին վերաբերող դիտարկումները: 1711 թ. լինելով այնտեղ՝ նա հիշատակում է ժամասացությունն սկսելուց առաջ «աղոթագորգ փռելու», իսկ սրբասացության ժամանակ խաչվառների, ծնծղանների հետ միասին «երեք փռել պարսապի աղոթագորգ» փռված լինելու մասին¹⁰: Այսինքն՝ հայկական եկեղեցիների ներքնատեսքում որոշակի գործածություն ունենալուց զատ, դրանք գործածվել էին նաեւ աղոթքի ընթացքում. ըստ էության, «Եռախորանը», որպես եկեղեցուն նվիրված գորգ, կարող էր ունենալ նաեւ գործածական այդօրինակ նշանակություն:

⁷ Հայկական «աղոթքի գորգերի» մասին հիշատակություն ունի արաբ աշխարհագիր Իդրիսին. վերջինս նշում է, որ առանձնապես հայտնի ու տարածված էին «հայկական ուտատակի փոքր գորգերը». տե՛ս Н. Марр, Ани, Ереван, 1939, էջ 237, ծանոթ. 165 ա. տե՛ս նաեւ Ա. Պողոսյան, Հայոց գորգերի «տապաստա» կոչումը տեսակի մասին, «Հանդես ամսօրեայ», հայագիտական ուսումնաթերթ, Վիեննա, 2007, թ. 1-12, էջ 429- 441:

⁸ Տե՛ս Г. Тер-Гевондян, Армения и арабский халифат, Ереван, 1978, էջ 206:

⁹ Տե՛ս ՆՀԲ, հ. Ա., Ա-Կ, Երեւան, 1979, էջ 407:

¹⁰ Տե՛ս «Թոքավաճառի որդի Զուար քահանայի ճանապարհորդությունը եւ ուխտագնացությունը Երուսաղեմ». «Միջնադարյան հայկական ուղեգրություններ երկու գրքով», գիրք Բ., ԺԵ.-ԺԷ. դարերի ուղեգրություններ, թարգմ., առաջ. եւ ծանոթ.՝ Ա. Մադոյանի, Երեւան, 2005, էջ 120,127:

Աղոթագորգերի եւ ընդհանրապես հայոց գորգագործական մշակույթի պատմության մասին պատկերացում ստանալու համար անհախադեպ կարեւորություն ունեցող պատմամշակութային նշանակության այս առարկայի արժեւորման գործում գոյություն ունեն մի քանի հիմնախնդիրներ, եւ դրանց անդրադառնալու նպատակով է, որ ձեռնարկել ենք սույն հետազոտությունը: Կարծում ենք, որ դրա պատմագիտական արժեւորման գործում չափազանց կարեւոր է այն, որ հիշատակարանում պարզորոշ կարգացվում է գրություն մեծ մասը, հատկապես՝ գործվածքի տեսակին ու կատարման թվականին վերաբերող հատվածները՝ «Արկանսելիս Կիրակոսի քանասիրի.... ՈԾԱ. թվին q սա գործի...» (նկ. 3):

Սակայն, որքան էլ տարօրինակ թվա, հիմնական բանավեճը վերաբերում է հենց թվագրմանը: Չնայած գորգի հիշատակարանում թվագրման հատվածն առավել պարզ շարադրվածներից է, այնուամենայնիվ, մի շարք ուսումնասիրողներ այն համարում են անընդունելի: Դեռեւս 1908-1909 թթ. ավստրիացի հանրահայտ արեւելագետ, մշակութաբան Յոզեֆ Ստրիկովսկին, նկատի ունենալով դրա գեղագաղղման համակարգի խորանավոր բնույթը, կասկածելի է համարել Ա. Ռիբլի հրապարակած տարեթիվը եւ առաջ է քաշել այդ գորգը ԺԶ.-ԺԷ. դարերում գործված լինելու տեսակետը¹¹: 1937 թ. Վիեննայում հրատարակված «Հայկական գորգեր» ուսումնասիրության հեղինակ, լեհ հետազոտող Զդենկո Հոֆ-ռիխտերը, անդրադառնալով խնդրո առարկային ու համաձայնելով Յ. Ստրիկովսկու տեսակետին, համոզմունք է հայտնել առ այն, որ հիշատակարանի թվակիրը՝ «ՈԾԱ.» հատվածի «Ո.» տառը իրականում պետք է լիներ «Ի.», պարզապես գործողի անուշադրության հետեւանքով այդ տառի երկստը չի գործվել: Ահա այսպիսի մի վերացական հիմնավորման արդյունքում էլ, որպես խնդրո առարկա գորգի գործման տարեթիվ, ընդունվել է 1602 թվականը¹²: Այս տեսակետը ժամանակին մերժել էին հայ հետազոտողները: Մասնավորապես 1947 թ. հրատարակված իր հայտնի աշխատության մեջ այսպիսի ընթերցումը միանգամայն անհիմն ու մտացածին համարելով՝ Հարություն Քուրտյանը միաժամանակ ներկայացրել է հիշատակարանի ընթերցման իր տարբերակը, որը մասնակիորեն տարբերվում է Գրիգորիս Գալեմբարյանի կարգացածից եւ ունի

¹¹ J. Strzygowski, Oriental carpets, The Burlington Mag., okt. 1908. այս մասին տես Հ. Քուրտյան, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 64, ծանոթ. 25:

¹² Z. Hofrichter, Armenische teppiche, Viena, 1935. նույնի հայերեն թարգմ.՝ Զ. Հոֆռիխտեր, Հայկական գորգերը, «Հանդես ամսօրեայ», թ. 1-6, Վիեննա, 1937, էջ 155-190:

Հետեւյալ բովանդակությունը՝ «Արկանտի/ս/ Կիրակոսի քանասիր/ի/ ե/րոս/ յիշարակ Հոփսիսիմ, րի/կի/ն ՌԾԱ. թվին զսա գործիցա ես»¹³: Գորգի գործման «ՌԾԱ.» թվականը անվերապահորեն ընդունելով հանդերձ՝ հիշատակարանի ընթերցման իր տարբերակն է ներկայացրել նաեւ Վարդան Թեմուրճյանը՝ «Արկանտիս Կիրակոսի քանանցեցուց ի յիշարակ Հոփսիսիմ, րի/կի/ն ՌԾԱ. թվին զսա գործիցա ես»: Մի շարք ուսումնասիրողներ եւս, մասնավորապես ակադեմիկոս Բ. Առաքելյանը, Ս. Դավթյանը եւ Լ. Ամիրյանը՝ հիշատակարանի ընթերցման տարբերակների հետ կապված որոշ առարկություններով հանդերձ, համամիտ են գորգի հիշատակարանում եղած «ՌԾԱ.» թվականի իսկությանն ու գտնում են, որ «Եռախորանը» իրոք գործել են 1202 թվականին¹⁴:

Ոմանք էլ ընդունելով Զ. Հոֆուրտերի առաջարկած թվագրումը՝ փորձել են այն լրացնել տարատեսակ հիմնավորումներով: Օրինակ՝ Մ. Ղազարյանը կարծում է, որ այս գորգի առաջին հրատարակիչը՝ Ալոիզ Ռիզլը, սխալմամբ այն համարել է «աղոթագորգ» եւ դրանից ելնելով՝ կատարել սխալ թվագրում: Ըստ Մանյա Ղազարյանի՝ «Եռախորանը» գործել են որպես զոհասեղանի կամ խորանի վարագույր: Գորգի սյունազարդ կամարներն ու դրանց միջանկյալ տարածքները հետազոտողը համադրում է հայկական մանրանկարներին բնորոշ կամարազարդ բացվածք-խորանների հետ, որոնցում տեղադրվում էին առանձին բնագրեր: Պարզապես «Եռախորանի» գեղազարդման համակարգում արտահայտված են դրանց ուշ տարբերակները, բնականաբար, առանց բնագրերի: Այդ ամենի հիման վրա այս ուսումնասիրողը, անվերապահորեն հետեւելով Զ. Հոֆուրտերին, գորգի հիշատակարանի թվակիր մասը կարգացել է «ՌԾԱ.» տեսքով եւ այդպիսով այն համարել 1602 թվականի գործ: Իսկ ամբողջական տեսքով հիշատակարանը Մ. Ղազարյանը կարգում է. «Արկանտի/ս/ Կիրակոսի Բանանցեցուց ի յիշարակ Հոփսիսիմ, րի/կի/ն ՌԾԱ. թոփն զսա գործի սա եմ»: Ինչպես տեսնում ենք, այս տարբերակը բավականին տարբերվում է մյուսներից, բայց հետեւելով Վ. Թեմուրճյանին՝ Մ. Ղազարյանը եւս գորգի ստեղծման վայր է համարում Բանանց գյուղը¹⁵:

¹³ Հ. Քուրտեան, Գորգը հայոց մոտ, Վենետիկ, 1947, էջ 64:

¹⁴ Վ. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 35, 69-71. Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 292. Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երեւան, 1981, էջ 123-124. Լ. Amirian, Competiton, Hali, vol. 6, թ. 1, 1983, էջ 107-108. տե՛ս «Հայկական գորգեր», կազմ.՝ Վ. Ազատյան, առաջ.՝ Ա. Մարգարյանի, Երեւան, 1986, էջ 10:

¹⁵ Տե՛ս M. Ghazarian, Armenian Carpet, Los Angeles, 1988, էջ 12. առավել մանրամասն տե՛ս

Ի՞ր՝ արեւելաքրիստոնեական գորգին նվիրված ծավալուն ուսումնասիրություն մեջ այս գորգին անդրադարձել է նաեւ Յ. Գանցհորները: Այս դեպքում գործ ունենք գորգի հիշատակարանի չափազանց ինքնատիպ ընթերցման հետ՝ «ՍԲ Հոփսիսիւմի փաճարի Սրբութիւն սրբոցի դոսն վարագոյր Տիրոջ 1051 ամի (Բ. հ. 1602 թ.) կամ 1651: Սա եւ Գորգի վարպետս (եւ եւ արեւ կամ նուիրարերն)»: Այս տարբերակը, ինչպես տեսնում ենք, ոչ մի կերպ չի առնչվում գորգի վրա գործված գրություն իրական շարադրանքին ու բովանդակությանը: Այստեղ բացակայում է հիշատակարանի առաջին հատվածը, որում կան «Արկանելի», «Կիրակոս», «քանասիր» (ինչպես այն կարդում է Հ. Քուրտյանը) հստակ ընթերցվող բառերը: Հասկանալի է, որ այս տարբերակում գորգի ստեղծման ժամանակը համարվել է 1602 թ., սակայն անհասկանալի է «1651»-ով թվագրելու հնարավորության հանգամանքը: Ընդհանրապես, այս գորգը հետազոտած բոլոր ուսումնասիրողների համար, կարծում ենք, ամենաընթեռնելին հենց թվակիր «ՈԾԱ.» հատվածն է. այլ հարց է, որ նրանց մի մասն ուղղակի ձգտում է ինչ-ինչ պատճառներով անընդունելի համարել այդ պարզ իրողությունը: Սակայն, այնուամենայնիվ, թյուրիմացությունների տեղիք տվածներից առավել ակնհայտը Յ. Գանցհորների աշխատության մեջ եղած՝ «սա եւ Գորգի վարպետս» հատվածն է¹⁶: «Եռախորանի» հիշատակարանում, անշուշտ, կան անընթեռնելի կամ դժվար ընթեռնելի հատվածներ, այդուհանդերձ, անհասկանալի է, թե ինչպես է կարդացվել հիշատակարանի վերջին մասի շարադրանքը, որի արդյունքում ստացվել են «Գորգի վարպետը» բառերը. Յ. Գանցհորնն այդ գորգն անվանել է վարպետի անունով եւ այն մտցրել գիտական շրջանառության մեջ: Այս բացարձակ անիմաստ թարգմանության հետեւանքով՝ անվանի գորգագետի ուսումնասիրությունը նոր ընթացք է տվել «Եռախորանի» թվագրման՝ Զ. Հոֆ-ռիխտերի տարբերակի տարածմանը, ու բացի այդ՝ շրջանառության մեջ է հայտնվել մտացածին «Գորգի» անվանումը: Արտերկրի մի շարք մասնագետներ, ծանոթ չլինելով նախորդ ուսումնասիրողների աշխատանքներին ու հիմք ընդունելով հենց Յ. Գանցհորնի ուսումնասիրությունը, «Եռախորանը» դիտարկում են որպես 1602 կամ 1651 թվականին գործված «Գորգի» գորգ:

Այդ առումով տիպական է Ալբերտ Բորայկիի տեսակետը. նա մի քանի տարի առաջ անդրադարձել է այս գորգին եւ ծանոթ է Ալոիզ Ռիգլի

М. Казарян, Армянские ковры, Москва, 1985, էջ 46, 53:

¹⁶ V. Ganzhorn, Le Tapis Chretien Oriental, Koln, 1991, էջ 29, 484:

Հրապարակմանն ու, անշուշտ, նաեւ թվագրմանը¹⁷: Ըստ երեւույթին, նա ծանոթ է Հայ ուսումնասիրողների հետազոտություններին եւ «Եռախորանի» հիշատակարանի ընթերցումներին՝ նրանց կողմից առաջարկված տարբերակներին, ուստի միանգամից ընդունել է այն ավելի ուշ շրջանում գործված լինելու տեսակետը: Ա. Բորալեւին այս գորգի վերաբերյալ նշել է, որ այն «հավանաբար գործված է ավելի ուշ շրջանում (Ժէ. դ.): Դա հայտնի «Գորգի» գորգն է, որի գտնվելու վայրն այսօր անհայտ է»¹⁸:

Գորգի թվագրման հարցում կա եւս մեկ տեսակետ: Սփյուռքահայ հայագետ, մշակութաբան Տ. Կուլումջյանը վերջերս հրապարակած իր ուսումնասիրություններից մեկում, ըստ երեւույթին, այս գորգը համարելով պատմամշակութային նշանակությունից զուրկ մի գործվածք, միայն տողատակի ծանոթագրության մեջ է անդրադարձել խնդրո առարկային: «Եռախորանի» հիշատակարանի՝ հատկապես թվակիր հատվածի մասին Հայր Գրիգորիս Գալեմքերյանի, Հ. Քուրտյանի, Բ. Առաքելյանի, Վ. Թեմուրճյանի, Ս. Դավթյանի, Լ. Ամիրյանի, նաեւ Զ. Հոֆեռիստերի ու Ֆ. Գանցհորնի տեսակետները նա համարում է անընդունելի եւ սխալ: Տ. Կուլումջյանը համոզված է, որ կատարման թվականին վերաբերող հատվածը «կարելի է կարդալ ԶԿԱ (961+551 = 1512), քայց, ամենայն հավանականությամբ, ոչ ՈԾԱ (651+551 = 1202), գորգի զարդանախշը, զարդարանքներն ու կազմությունն այսպիսի վաղ տարեթիվը դարձնում են գրեթե անհնարին»¹⁹: Ինչպես տեսնում ենք, այս հեղինակը գորգի ավելի ուշ թվագրման հարցում, Մ. Ղազարյանի նման, ելակետային է համարում գեղազարդման մանրամասները, որոնք, իր կարծիքով, բացակայում էին վաղ կամ զարգացած միջնադարում: Ցանկալի կլիներ, որ այդ ամենը հիմնավորվեր համապատասխան, առավել մանրամասն բացատրություններով եւ փաս-

¹⁷ A. Boralevi, The mystery of Armenian «Niche» rugs, Armenian knot, Traditions of karpet weaving Art, Erevan, 20-22 November, 2013, Erevan, 2016, p. 123.

¹⁸ Ի դեպ, «Եռախորանի» գտնվելու վայրը բոլորովին էլ անհայտ չէ. այն պահվում է Վիեննայի արվեստի եւ արդյունաբերության պատմության թանգարանում, իսկ Ֆ. Գանցհորնի գրքի հրատարակման տարիներին ու մինչ 2008-2009 թթ. գտնվում էր ցուցադրության մեջ: Համենայնդեպ, 2011 թ. կեսերին այդ գորգը թանգարանում լուսանկարել եւ ինձ է տրամադրել արեւելյան գորգի փորձագետ, տեխնոլոգ եւ վերականգնող Ավետիս Կուլումջյանը, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը: Ընդ որում, որպես ծագման ժամանակ, նշված էր 1651թվականը, վայր՝ Այնթապը: 2014 թ. սեպտեմբերին լինելով այդ թանգարանում՝ պարզել ենք, որ այն հանվել է ցուցադրությունից եւ գտնվում է պահոցներում:

¹⁹ D. Kouymjian, The Berlin Dragon-Phoenix Carpet and its Probable Armenian origin, Armenian Rugs and Textiles an over view of Examples From Four Centuries, Exhibition Catalogue, Vienna, 2014, p. 24.

տարկներով, թեեւ, միեւնույն է, ցանկացած բացատրություն դեպքում էլ հիշատակարանի թվակիր հատվածում հնարավոր չէ տեսնել «Ջ.» եւ «Կ.» տառերը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, «Եռախորան» գորգի թվագրման հետ կապված՝ գոյություն ունեն չորս հիմնական տարբերակներ, որոնց բոլորի հիմքում ընկած են գրության յուրովի ընթերցումներն ու մեկնաբանումները:

«Եռախորանի» ծագման ժամանակի հարցում մեր մոտեցումները միանգամայն այլ են, գորգի հիշատակարանում եղած թվակիր հատվածի վերաբերյալ բոլոր առարկույթներն էլ համարում ենք թվացյալ ու մտացածին:

Իսկ այդ առարկույթները հետեւյալներն են՝

ա. Կա այն համոզմունքը, որ հիշատակարանում եղած «ՈԾԱ.» տառերից առաջինը պետք է կարդալ «Ռ.»:

բ. «Եռախորանի» գեղազարդման համակարգն ու դրանում տեղ գտած նախշերի մեծ մասը բնորոշ չեն այդ ժամանակաշրջանի հայոց գեղազարդման արվեստի ավանդույթներին:

Ըստ մեզ՝ այս բոլոր հարցադրումների առումով բավականաչափ համոզիչ բացատրություններ արդեն իսկ արված են:

Նախ՝ թվագրման վերաբերյալ. թվագրման այլ տարբերակ առաջարկողները համոզված են, որ գրության թվակիր «ՈԾԱ.» հատվածում գորգագործը մոռացել է գործել «Ռ.» տառի ճյուղը, եւ դրա արդյունքում ստացվել է «Ո.» տառը: Կարծում ենք, որ այսպես մտածողները պատկերացում չունեն գորգագործության մասին: Դա տպագրություն չէ, որ մի ակնթարթում գրվի եւ ավարտվի. գորգի մեջ այդ տառը գործելու համար առնվազն տասը հանգուցաշարք է գործվել, իսկ այդքանը կարելի է գործել մոտ մեկ օրվա ընթացքում, ուստի հասկանալի է, որ նման օրինակ վրիպում կոչվածը հենց այդ պահին կնկատվեր եւ կուղղվեր: Բացի այդ՝ գործատուն-արհեստանոցներում գորգ գործում էին նկարիչների ու հսկիչների վերասկողության ներքո, ուստի նման վրիպումներ թույլ տալը այդ պայմաններում բացառված էր: Այս դեպքում կար նաեւ պատվիրատուի՝ Կիրակոս բանասերի գործոնը: Ավաճից հետեւում է, որ տառասխալ թույլ տված լինելու մասին խոսելը միանգամայն անտեղի է:

Ուսումնասիրողների ուշադրությունն ենք հրավիրում նաեւ արձանագրության մեջ հստակ կարգացվող «Ռ.» տառի առկայության վրա «ՀՕ-

ոխիսիսիմ» բառում՝ այն վկայում է, որ գործողը անհրաժեշտություն դեպքում կարողացել է հստակ ու պարզորոշ հյուսել անհրաժեշտ տառերին համապատասխան հանգույցները:

Սակայն այս գորգի թվագրման հարցում, անկախ հիշատակարանում եղած թվակիր հատվածից, կարեւոր նշանակություն ենք տալիս նաեւ հիշատակարանի ոճին ու բառակազմին. դրանք բոլորը, փաստորեն, վերաբերում են վաղ եւ զարգացած միջնադարյան ժամանակաշրջաններին: Արդեն իսկ դրանում եղած «արկանեղի» բառը, որը գործվածքի ընդհանուր հասկացություն է արտահայտում²⁰, չի հանդիպում հետագա դարերի մատենագրության մեջ: Տվյալ բնագրում հիմնավոր ենք համարում այդ բառի՝ «գորգ» նշանակելու հանգամանքը, մասնավոր, հայտնի է, որ գործվածքի այդ տեսակը տարբերակվել է մի քանի այլ անուններով եւս՝ «տապաստա», «բազմական», «շատրվան» եւ այլն: Խնդրո առարկայի ծագումնաբանության հարցի լուծման առումով մեզ համար կարեւոր բացահայտումների առիթ հանդիսացավ «բազմական» բառը: Հայտնի է, որ վաղ եւ զարգացած միջնադարյան հայ մատենագրություններում գործածված այս բառը նշանակում էր սեղան, փուռ, ծածկոց, գահավորակի ծածկոց, սետջադե²¹: Հ. Քուրտյանն իր հայտնի ուսումնասիրության մեջ ի մի է բերել հայոց մատենագրության մեջ վերը բերված բառերից մի քանիսին՝ մասնավորապես «բազմականին» եւ «արկանեղին» վերաբերող տեղեկությունները: Ըստ այդմ՝ դրանցից առաջինը հիմնականում գործածական էր Դ.-ԺԱ. դարերում, իսկ երկրորդը՝ մինչ ԺԳ. դարը: Կարեւոր է նաեւ, որ «բազմականը» համարվել է առավել թանկարժեք գործվածք²²: «Բազմականը» հիշատակված է Խաչիկ Ա. Արշարունի կաթողիկոսի՝ 976 թ. գրված ու Նախիջևանի գավառի նորաբաց Ս. Նախավկայի վանքի Բաբեկեն եպիսկոպոսին ուղղված կոնդակում: Այդտեղ մասնավորապես ասված է, որ ի շարս արարողակարգային ու դավանաբանական բնույթի որոշակի պարտավորությունների՝ «...պարտիք տալ Աստուծոյ՝ քաժին Աթոռոյ, տեսնականս, զխաչօրհնեսն, եւ զսրբանուէրս, զիրաւունս մաւրաղաց. կենդանեաց եւ ննջեցեաց բազմականսն, զյանկարծամահ եւ զառականահ, եւ զամենայն իրաւունս կենաց եւ մահու յիով անթերի տուք ի ձեռն դորս զուարթ եւ առաւր սրտի...»²³: Գրիգոր ԺԱ. Բյուզանդացի կաթողիկոսը նույն վանքին

²⁰ ՆՀԲ, հ. Ա., Ա.-Կ., Երեւան, 1979, էջ 562:

²¹ Անդ, էջ 407:

²² Այս մասին տես Հ. Քուրտեան, նշվ. աշխ, էջ 22-23, 44, 61:

²³ Մեսրոպ արք. Սմբատեանց, նշվ. աշխ, էջ 412:

1545 թ. ուղղել էր նման մի կոնդակ, որտեղ, սակայն, վերոհիշյալ պարտավորությունների թվում հիշատակված «քազմականի» փոխարեն օգտագործված է «խալի» բառը՝ «կողոպուտ»²⁴ լա խալի մի, կամ լա շուրջատ փան յաթոռն...»²⁵: Ինչպես տեսնում ենք, նախորդի համեմատ, այս մի կոնդակի բառակազմում առկա են որոշակի տարբերություններ: Նախ՝ հանգուցյալների («...ննջեցելոց բազմականան, գյանկարծամահ եւ զառակամահ...») հիշատակի համար ընծայաբերվող նվերների տարբերակման համար կիրառվել է համահավաք «կողոպուտ» բառը: Եվ ամենակարեւորը՝ «քազմական» բառերի փոխարեն Գրիգոր ԺԱ. Բյուզանդացի կաթողիկոսը գործածել է արդեն ԺԶ. դարում շրջանառության մեջ մտած «խալի» բառը: Կաթողիկոսական կոնդակում հիշատակված արաբա-պարսկական ծագումով «խալի» բառի առկայությունը մատնանշում է հայոց բանավոր ու գրավոր խոսքից «քազմական», «արկանելի» եւ նման այլ հասկացությունների դուրս մնալը: Գրիգոր ԺԱ. Բյուզանդացի կաթողիկոսին, անկասկած, քաջ հայտնի էր, որ «քազմականը» եւ «խալին» նույն հասկացություններն են, ուստի եւ գործածել է իր դարաշրջանում հայոց բանավոր ու գրավոր խոսքում արմատացած այդ օտարահունչ, բայց մինչ մեր օրերը հայոց մեջ կիրառվող բառը:

Ասվածներից պարզ է դառնում, որ եթե «Եռախորանը» գործված լիներ ԺԶ.-ԺԷ. դարերում, ապա դրա հիշատակարանում առնվազն չէր լինի «արկանելի» բառը, քանի որ ուշ միջնադարից սկսած՝ հայոց մեջ, որպես «գորգ» բառի հոմանիշ, գործածվել էր «խալի» բառը: Դա են մատնանշում տվյալ դարաշրջանի գրավոր սկզբնաղբյուրները: Օրինակ՝ Առաքել Դավրիժեցին, նկարագրելով 1603 թ. Ջուղայի հայերի կողմից Շահ Աբբասին դիմավորելը, հիշատակել է, որ պարսից շահի անցնելիք ճանապարհը գորգերով էր ծածկված, եւ գործածել է «խալի» բառը²⁶: Այս նույն բառն ու «խալիչան» առկա են 1623 եւ 1727 թվական-

²⁴ «Կողոպուտ»՝ Եկեղեցուն տրվող տուրքերից է, որպես հոգեբաժին գանձվում էր չափահաս ննջեցյալների համար՝ մի եզ կամ մի ոչխար, կամ՝ դրամ (տես Ե. Լալայան, Վասպուրական, նշանավոր վանքեր, պրակ Ա., Թիֆլիս, 1912, էջ 89): Իգական սեռի մահացածների համար որպես «կողոպուտ» երբեմն արծաթեղենքն ալ կ'առնուն՝ իբրեւ մեղաց գին, եթէ հարուստ է՝ գգեստին ալ կ'եսն» (Մ. Միրախորեան, Նկարագրական ուղղետրություն ի հայաբնակ գաւառս արեւելեան Տաճկաստանի, մաս Բ., Կ. Պոլիս, 1883, էջ 18. նաեւ՝ Հ. Պողոսյան, Վասպուրականի պատմությունից (1850-1900), Երեւան, 1988, էջ 67-68): Մեսրոպ արք. Սմբատեանց, նշվ. աշխ., էջ 415:

²⁵ Անդ., էջ 415:

²⁶ Առաքել Դավրիժեցի, Պատմություն Հայոց, թարգմ., առաջ. եւ ծանոթ.՝ Վ. Առաքելյանի, Երեւան, 1988, էջ 32 :

ներին վերաբերող նվիրատվական մի գրություն մեջ²⁷: Աբրահամ Կրետացի կաթողիկոսը, նկարագրելով 1735 թ. Մայր Աթոռում Թաճմազ Ղուլի խանի (ապագա Նադիր Շահ) ընդունելությունը, գրում է, որ «... եղևալ ասագ խորանին արթոռ և խալիչայ և հրափրեցի անդ նարիլ»²⁸: Իսկ Խնձորեսկ գյուղի մասին վկայում է՝ «...և ի գիղս այս պարսուսկան շար խալի ու խալիչայ գործէին առաջ...»²⁹: Բավարարվելով բերված օրինակներով՝ կարող ենք հստակ եզրակացնել, հիշատակարանի թվակիր մասի հավաստի լինելուց բացի՝ «Եռախորան» գորգի՝ 1202 թվականին գործված լինելը հաստատվում է նաեւ «արկանեյի» բառի առկայությամբ: Ընդ որում, սրանք այն փաստարկներն են, որոնք առնչություն չունեն հետազոտողի նախընտրությունների հետ՝ դրանք միանգամայն հավաստի վկայություններ են:

Գեղազարդման համակարգի վերլուծություն. Ինչպես ասվեց, «Եռախորան» գորգի՝ 1202 թ. ստեղծված լինելը չընդունողների հիմնական բացատրությունը դրա գեղազարդման համակարգում տեղ գտած նախշերի մեծ մասի՝ ԺԱ.-ԺԳ. դդ. բնորոշ չլինելն է: Իրականում գորգի գեղազարդման համակարգն ամբողջությամբ անմիջականորեն առնչվում է հայոց գեղազարդման արվեստի՝ տվյալ ժամանակաշրջանի ավանդույթներին. առավել ակնհայտ արտահայտությունները ներկայացնում են այդ եւ նախորդ ժամանակաշրջանի մանրանկարները, մասնավորապես, Ավետարանների խորաններն ու զարդասյուները³⁰:

Ժամանակին դա մատնանշել են Հ. Քուրտյանը, Վ. Թեմուրճյանը, Բ. Առաքելյանը, նաեւ ընդգծել «Եռախորանի» գեղազարդման համակարգում տեղ գտած զարդանախշերի բնորոշ լինելը հայոց զարդարվեստի ավանդույթներին³¹: «Եռախորանի» գեղազարդման համակարգի եւ ԺԲ.-ԺԳ. դդ. հայոց զարդարվեստի աղբյուրների առնչությամբ արվեստագիտության դոկտոր Հրավարդ Հակոբյանը կարծում է, որ «այդ գոր-

²⁷ Տե՛ս Ազգային մատենադարան, ՃՂ., «Կուտինահայ ժամանակագրություն» (հրատ.՝ Հ. Զօրթեան, Վիեննա, 1960, էջ 22, 118 / http://serials.flib.sci.am/openreader/Kutina-hay_1960/book/index.html#page/38/mode/2up/:

²⁸ Աբրահամ Կրետացի, Պատմություն, քնն. քնագիր, ռուս. թարգմ., առաջ. եւ ծանոթ.՝ Ն. Լորդանյանի, Երևան, 1973, էջ 53-54:

²⁹ Անդ, էջ 152:

³⁰ Տե՛ս «Հայկական մանրանկարչություն», առաջ. եւ ծանոթ.՝ Լ. Դունտովոյի, Երևան, 1969, տախտակ 2, 18, 19, 31 եւ այլն:

³¹ Վ. Թեմուրճյան, Գորգագործությունը Հայաստանում, էջ 70-71. Բ. Առաքելյան, նշվ. աշխ., էջ 292-293:

գի ճարտարապետական-եռախորան հորինվածքը՝ միահյուսված բուսական նախշազարդերի հետ, չափազանց հարազատ է Արցախի՝ ԺԳ.-ԺԴ. դդ. արվեստի ավանդույթներին»³²: Մանրանկարներից հայտնի թռչնապատկերներից կազմված հորինվածքների տարբերակներ են խոյակների եւ եզրային խորանների գազաթներին պատկերված ոճավորումները: Ըստ էություն, հայոց գորգագործական մշակույթի ուսումնասիրման հարցում կարեւոր նշանակություն ունեն կենտրոնական խորանի գազաթի աջ ու ահյակ դիմահայաց պատկերված առասպելական կենդանապատկերները (նկ. 4): Մենք հակված ենք դրանք համարելու վիշապագորգերին բնորոշ վիշապի ոճավորումների վաղ տարբերակներ: Ուշագրավ է նաեւ խորանազարդի կենտրոնական հորինվածքը. այս դեպքում ակնհայտ են դասական վիշապագորգերի «ճաճանչազարդ» վարդակներով բնորոշվող հորինվածքները եւ դրանց աղբյուրները (նկ. 6): Այսինքն՝ դասական վիշապագորգերի ծագումնաբանություն ու դրանց գեղազարդման առանցքային հորինվածքների տարբերակների ձեւավորման հարցում, ի շարս ԺԱ.-ԺԳ. դարերին վերաբերող մանրանկարների, պետք է կարեւորել նաեւ «Եռախորան» գորգի գեղազարդման համակարգի մանրամասները³³:

«Եռախորանի» գեղազարդման համակարգին անդրադարձել է նաեւ Ս. Դավթյանը. նա նույնպես հանգել այն եզրակացությունը, որ խնդրո առարկա գորգի գեղազարդման սկզբունքներն ու մանրամասները միանգամայն համահունչ են ԺԳ. դարի ավանդույթներին³⁴: Այսինքն, ինչպես տեսնում ենք, գեղազարդման մանրամասների հարցում «Եռախորան» գորգը միանգամայն համապատասխանում է վաղ եւ դարգացած միջնադարյան հայոց գեղազարդման արվեստի ավանդույթներին:

«Եռախորան» գորգի ծագման վայրը. Ուսումնասիրողներից Վարդան Թեմուրճյանը, հիշատակարանում գրված «բանասիրի» բառը կարգալով «Բանասցուց», գորգի ստեղծման վայրը, բնականաբար, համարում է պատմական Գարդման գավառի գորգագործական մշակույթի այդ խոշոր կենտրոնը³⁵: Այդ տեսակետն ունի նաեւ Մ. Ղազարյանը: Սակայն,

³² Հր. Հակոբյան, Արցախի միջնադարյան արվեստը, Երեւան, 1991 (հայերեն, ռուսերեն, անգլերեն), էջ 21, 52, 84:

³³ Տնն Ա. Պողոսյան, Վիշապագորգերի ծագումնաբանության եւ տարածման արեալների հարցի շուրջ, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2004, թ. 1-12, էջ 370, 378-380:

³⁴ Ս. Դավթյան, նշվ. աշխ., էջ 124:

³⁵ Վ. Թեմուրճյան, նշվ. աշխ., էջ 35. Նաեւ՝ Ս. Դավթյան, Դրվագներ հայկական միջնադարյան կիրառական արվեստի պատմության, Երեւան, 1981, էջ 123-124. Հր. Հակոբյան,

ինչպես տեսնում ենք, հիշատակարանում հստակ կարգացվում է «քանա-սիրի», ուստի այս գորգի գործման վայրը *Բանանցը* համարելու հիմք չկա:

Ֆ. Գանցհորնը, համոզված լինելով, որ գորգը ժէ. դարում է գործվել, նշում է. «...վստահությամբ կարելի է ենթադրել, որ կամարագորգերի ծագումը (խորանագորգեր) պետք է վերագրել հարավարեւմտյան Կովկասի եւ արեւելյան կամ հարավարեւելյան Անատոլիայի հայկական տարածքներին. 1602 կամ 1651 թվականով թվագրված գորգը պետք է որ սերի հարավ-արեւելքից եւ հենց Այնթափի մերձակայքից»³⁶: Ընդ որում, Ֆ. Գանցհորնը ենթադրում է նաեւ, որ դարերի ընթացքում կարծես խորանագորգեր գործելու ավանդույթը արեւելքից տեղաշարժվել է դեպի արեւմուտք³⁷:

Բավականաչափ կարեւոր եւ այս գորգի ծագումնաբանության հարցում ուշագրավ է նաեւ Ա. Բորալեւիի տեսակետը: Նա ենթադրում է, որ «խորանավոր ու սյունագարդ գորգերը նման են ԺԸ.-ԺԹ. դդ. արեւմտյան Անատոլիայում՝ Գյորդեսում կամ Քուլայում գործված աղոթագորգերին, մինչդեռ ժէ. դ. ամենավաղ նմուշները հայտնի են «Տրանսիլվանյան սյունագորգ» անվամբ, հավանաբար, գործվել են Ուլակի տարածքում եւ սխալմամբ կոչվել «Սյունագարդ Լադիկ»։ Սյուս կողմից, այնուամենայնիվ, «Գորգի» գորգն ու դրա կրկնօրինակներն իրենց գեղազարդման համակարգի կառուցվածքով, կենտրոնական դաշտի հորինվածքներով եւ զարդագոտիներով հարում են կովկասյան գորգերին»³⁸:

«Եռախորանի» ծագման վայրի հարցում գոյություն ունեն մի շարք գործոններ: Դրանց թվում կարեւորում ենք այն, որ, ինչպես վերը նշվեց, այդ գորգի ու դասական վիշապագորգերի գեղազարդման մանրամասներում առկա են կարեւոր զուգահեռներ: Իսկ վիշապագորգերի ծագման ու ձեւավորման առավել հավանական կենտրոնները, մեր կարծիքով, պատմական Հայաստանի արեւելյան նահանգներն են, առաջին հերթին՝ Արցախը եւ Սյունիքը³⁹: Ըստ էության, «Եռախորանի» ծագման հարցում մեր կողմից հիշատակված տարածաշրջանները կարեւորում են նաեւ Ֆ. Գանցհորնը եւ Ա. Բորալեւին: Ֆ. Գանցհորնը Փոքր Ասիայում խորա-

Արցախի միջնադարյան արվեստը, Երեւան, 1991, էջ 21:

³⁶ V. Gantzhorn, նշվ. աշխ., էջ 484:

³⁷ Անդ:

³⁸ A. Boralevi, նշվ. աշխ., էջ 123, 125:

³⁹ Տե՛ս Ա. Պողոսյան, Վիշապագորգերի ծագումնաբանության եւ տարածման արեւելքի հարցի շուրջ, էջ 391:

նագորգերի հայտնվելը փորձում է բացատրել պատմական Հայաստանից դեպի այդ տարածաշրջանները կատարված տեղաշաժերով⁴⁰: Նկատի ունենալով ԺԲ.-ԺԷ. դդ. պատմական Հայաստանի արեւելյան ու կենտրոնական նահանգներից դեպի Փոքր Ասիա կատարված հայոց անընդմեջ տեղաշարժերը՝ միանգամայն հավանական ենք համարում ուշ միջնադարում խորանագորգերի արեւելահայկական ավանդույթների արմատավորվելը փոքրասիական գորգագործական կենտրոններում⁴¹: Վերոհիշյալներից ելնելով՝ ենթադրում ենք, որ խնդրո առարկա գորգի ստեղծման մեծահամասկան տարածքները հյուսիսարեւելյան Հայաստանի գորգագործական կենտրոններն են, այն գործվել է Կիրակոս բանասերի պատվերով՝ Հռիփսիմե կույսի եկեղեցուն նվիրելու նպատակով: Ընդ որում, հյուսիսարեւելյան Հայաստանի գորգագործական կենտրոններում գործված լինելը հիմնավորող փաստարկներից մեկը այդ տարածաշրջաններում կույսի անվան «Հոռիփսիմե» եւ նման տարբերակների առկայությունն է: Ընդհանուր առմամբ՝ այն համոզմունքին ենք, որ «Եռախորան» գործել են վանական համալիրներից մեկին կից արհեստանոցում կամ մենաստանում, անշուշտ, գորգագործ նկարիչների եւ համապատասխան այլ մասնագետների մասնակցությամբ:

Ամեն դեպքում, ծագման վայրի հարցում կա հետագա հետազոտությունների անհրաժեշտություն եւ, ըստ մեզ, առաջին հերթին այն անհրաժեշտ է իրականացնել Հայոց Արեւելից կողմի պատմամշակութային կենտրոններում: Հոսով ենք, որ հետագա պրպտումների արդյունքում կպարզվի նաեւ այդ եկեղեցու գտնվելու վայրը:

Այսպիսով, ամփոփելով սույն ուսումնասիրությունը, կարող ենք արձանագրել, որ խնդրո առարկա գորգի հիշատակարանում առկա թվականի իսկությունը կասկածանքի տակ դնելու որեւէ հիմնավորում գոյություն չունի: Ակնհայտորեն պարզ է, որ 1202 թ. գործված «Եռախորան»

⁴⁰ V. Gantzhorn, նշվ. աշխ., էջ 484:

⁴¹ Տես Ա. Պողոսյան, «Ջրաբերդ» խմբի գորգերի ծագումնաբանական հարցերի մասին, «Էջմիածին», 2008, ԺԲ., էջ 38-49, «Գորգագործությունը Փոքր Ասիայում (XIX դ. երկ. կես, XX դ. առ. քառորդ)», Հայ ժողովրդական մշակույթ XVI, Դերենիկ Վարդույանի 100-ամյակին նվիրված գիտաժողով. «Ավանդականը եւ արդիականը հայոց մշակույթում», Դերենիկ Վարդույանի ծննդյան 90-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, Երեւան, 2014, էջ 102-110. A. Poghosyan, Rug weaving Culture of Artsakh, Historico-Ethnographic illustrated study, Saarbrücken, Germany, 2015. A. Poghosyan, On the Origin of Anatolian Rugs, "Armenian Knot": Traditions of Carpet Weaving Art. Proceedings of the international Conference, Yerevan, 20-22 November, 2013, Ministry of Culture of the Republic of Armenia, Yerevan, 2016, էջ 258-270:

գորգը մինչ մեր ժամանակները պահպանված հայոց հնագույն գորգերից է: Ուստի, որպես խորանագորգի նմուշ, այն սկզբնաղբյուրային նշանակություն ունի գորգերի այդ տիպի ծագումնաբանության ու գեղագարդման համակարգի ձեւավորման պատմության խնդրում: Կարծում ենք, որ այն պետք է կարեւորվի ընդհանրապես առաջավորասիական գորգագործական մշակույթի՝ զարգացած միջնադարյան ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման գործում:

Ասվածից ելնելով՝ հարկ ենք համարում նաեւ հորդորել Վիեննայի արդյունաբերության եւ ճարտարապետության թանգարանի տնօրինությանը, որ հայոց գորգագործական մշակույթին վերաբերող պատմամշակութային այս հազվագյուտ արժեքը հանվի պահեստառաններից եւ ծագման ժամանակին ու վայրին վերաբերող՝ մեր ներկայացրած տեղեկություններով՝ իր արժանի տեղը գրավի թանգարանի մշտական ցուցադրությունում:

РЕЗЮМЕ

Ковер «Ерахоран» хранится в Венне, в музее промышленности и архитектуры. На нем имеется обширная надпись на армянском языке, которая гласит «...сию ткань филолог Киракос в году ՌԾԱ./1202 дал в память дому Рипсиме /». В 1895 году этот ковер опубликовал известный австрийский востоковед Алоиз Ригл. Однако, в дальнейшем, в вопросе датировки ковра возникли некоторые разногласия. Ряд исследователей, в частности поляк Этенко Гофрихтер, подвергли сомнению дату создания «Ерахорана», и как таковую они приняли 1602 год. Основаниями для такого подхода считают композиционное оформление ковра, которое по их мнению характерно традициям 16-17-го вв., и то, что ковроткач вместо буквы «Ռ.»/1000/ соткал букву «Ռ.»/600/. Эту версию поддерживают известные ковроведы Ф. Гантцорн, А. Боралеви и другие. Основываясь на имеющихся данных раннего и развитого средневековья, автор утверждает факт создания «Ерахорана» в году ՌԾԱ./1202/.

SUMMARY

The carpet “Yerakhoran” is preserved in The Museum of Applied Arts in Vienna having large Armenian inscription: “This textile is a memory from Kirakos of Banants to the home of Hripsime”: according to this inscription it was woven in 1202. Reposing the date of the inscription as such it was published by German orientalist Alois Riegl in 1895. In 1935 towards the question of numbering of this rug the polish researcher Zdenko Hofrichter announced his point of view. As the first letter of the numbering date of rug «ՌԾԱ.» he considered «Ռ.» and accordingly he accepted 1602 as the weaving date. With the above mentioned clarification the causes of the name erroneously given to this rug “Gorzi” by a number of researchers (V. Gantzhorn, A. Boralevi) are also discussed. The author relying on early and advanced Armenian medieval source materials confirms that the “Yerakhoran” rug was woven in «ՌԾԱ.» (1202).

